# ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ «ԵՌԱԲԼՈՒՐ» ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆՈՒՄ

28.01.2024 16:19



Հայոց բանակի կազմավորման 32-րդ տարեդարձի առթիվ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի, Փաստաբանական ակադեմիայի և Հանրային պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներն այցելել են «Եռաբլուր» զինվորական պանթեոն:

Փաստաբանները խնկարկել և ծաղիկներ են խոնարհել նահատակված հերոսների սխրանքները հավերժացնող հուշակոթողին և շիրիմներին՝ հարգելով նրանց հիշատակը:

*«Եռաբլուր» զինվորական պանթեոնում ննջում են նաև փաստաբանների զավակներ, ովքեր Հայկական բանակի անպարտելիության ու հայրենիքի պաշտպանության համար չխնայեցին իրենց կյանքը:*

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })